Հաստատում եմ՝ ----------տնօրեն՝ Ա□Թադևոսյան

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՊԼԱՆ

Դասղեկ՝ ---------- Լիանա Մայիլյան

25.08.2022թ□

Դպրոց	<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
Դասարան	6-րդ

Դասարանի աշակերտների թիվը՝ 29

Աղջիկներ՝ 13

Տղաներ՝ 16

Դասարանի ավագ՝ Ղազարյան Սպարտակ

ԴԱՍԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասարանում ձևավորված է առողջ դասարանական կոլեկտիվ, որտեղ հարգվում են բոլորի իրավունքները,իսկ պարտականությունների կատարումը դիտվում է որպես բնականոն գործընթաց:Դասարանը համախմբված է, բավականին ակտիվ է, մասնակից է համադպրոցական բազմաբնույթ միջոցառումների:

Ուստարվա սկզբին կրթադաստարակչական աշխատանքները սկսվեցին աշակերտների մոտ տարիքային փոփոխությունների ուսումնասիրմամբ:Այդ նպատակով անցկացվել են ծնողական ժողովներ, զրույցներ աշակերտների հետ՝ նպատակ ունենալով սերմանել սեր և հարգանք միմյանց նկատմամբ, ինչպես նաև հետևել դպրոցի ներքին կարգապահական կանոններին:Դասարանում ակնհայտ է դպրոցի և ընտանիքի միասնական պահանջների ապահովման գործընթացը:

Ուստարվա ընթացքում դաստիարակչական աշխատանքները իրագործվել են հոգևոր, գեղագիտական, ռազմահայրենասիրական, ֆիզիկական, աշխատանքային, բնապահպանական ուղղությամբ:

Դասղեկական ժամերն անցկացվել են՝ համաձայն հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի,ինչպես նաև ընդգրկվել են թեմաներ՝ «Խաղաղության կրթությունը Հայաստանում», «Ճանապարհային երթևեկության կանոններ», «Բնապահպանական հիմնախնդիրներ», «Հանդուրժողականության ուսուցում» կրթադաստիարակչական ծրագրերից, տոնական, ինչպես նաև հիշատակի օրերին նվիրված զրույցներ, միջոցառումներ: Դասղեկական ժամերը նպաստել են աշակերտների ինքնազարգացմանը, ինքնաճանաչմանը, ինչպես նաև ժամանակակից աշխարհում նրանց ադապտացմանը, կամային հատկանիշների ձևավորմանը, ինքնահիրացմանը:

Դասարանի ավագի և դասարանական կոլեկտիվի հետ տարված զրույցներ և աշխատանքներ

	Թեմա	Ժամկետ
1.	Ավագի պարտականությունները	02.09
2.	Հաճախումների, դասարանական կանոնների,օրվա ռեժիմի, հերթապահության մասին	02.09
3.	Դպրոցի ներքին կարգապահական կանոններ	Պարբերաբար
4.	Դասարանում առկա խնդիրներ	Պարբերաբար
5.	Հիգիենայի կանոնների պահպանումը դասարանում	Պարբերաբար
6.	Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններ	Պարբերաբար
7.	Աշակերտների պատրաստվածությունը դասերին	Պարբերաբար
8.	Կարգապահություն և Օրինակելի վարք	Պարբերաբար
9.	Միջոցառումների կազմակերպում	Պարբերաբար
10.	Սնման հիգիենայի, առողջ ապրելակերպի մասին	Պարբերաբար

Ծնողկոմիտեի կազմը

Նախագահ՝ Ասլանյան Ծովինար
Անդամներ՝ Հակոբյան Արևիկ
Բոյախչյան Արմինե
Վարդունց Մարիամ

Ծնողական ժողովներ

	Թեման	Նպատակը	Ժամկետը
1	Կազմակերպչական հարցեր. ա/դասագրքերով ապահովվածություն, բ/դասացուցակ, գ/օրվա ռեժիմ, դ/սանիտարական կանոններ:	Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում: Ծնողը երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչն է: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև, եթե ծնողներն ու դպրոցը հաջողությամբ համագործակցում են:	Սեպտեմբեր
2.	1.Կրթության դերն ու նշանակությունը: ա/ Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում: բ/«Ամանորյա հեքիաթ» դպրոցական միջոցառման կազմակերպում:	Ծնողները գիտակցեն՝ Հասարակության մտավոր ներուժն այն գրավականն է, որն ապահովում է ինչպես պետության հզորությունը,այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու և ընտանիքի բարեկեցությունը: Աշակերտների մոտ հետաքրքիր ժամանցի կարևորումը՝որպես դպրոցական առօրյայի մի մաս:	Դեկտեմբեր
3.	Սովորողների գնահատման առանձնահատկությունները և ձևերը:	Ծնողներին իրազեկել գնահատման ձևերը՝միավորային , ձևավորող և դրանց կիրառման առանձնահատկությունները: Ծանոթացում գնահատման բաղադրիչների հետ՝բանավոր,գրավոր,գործնական և էլեկտրոնային մատյանում դրանց տարբերակումը՝որպես ամփոփիչ գնահատման ուղենիշ:	Հունվար
4.	2022-2023ուսումնական տարվա ամփոփում: Նոր խնդիրների և դրանց լուծման ուղիների առաջադրում:	Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում, ուսումնաճանաչողական, նպատակային էքսկուրսիաների կազմակերպում:	Մայիս

Դասարանի մասնակցությունը համադպրոցական
միջոցառումներին

	Միջոցառման անվանումը	Մասնակիցների թիվը	Ժամկետ
1.	Գիտելիքի և դպրության օր /միջոցառում՝ նվիրված գիտելիքի օրվան/	29	01.09.2022
2.	«Ամանորյա հեքիաթ»	29	23.12.2022
3.	Բանակի օր	29	28.01.2023
4.	«Նվիրի՛ր գիրք» ակցիա. Թումանյանական օրեր	29	19.02.2023
5.	Մայրենիի տոն		21.02.2023
6.	Տարհանում	29	01.03.2023
7	« Եղեռն108»	29	24.04.2023
8	Հաղթանակների ամիս	29	09.05.2023
9	«Երեխաների պաշտպանության միջազգային օր»	29	01.06.2023

Աշխատանք դժվար դաստիարակվող,սոցիալապես անբարենաստ վիճակում գտնվող, ծնողազուրկ երեխաների հետ

Տարվել են զրույցներ վերոհիշյալ խմբին պատկանող երեխաների հետ,տեղի են ունեցել հանդիպումներ երեխայի և նրա ծնողների հետ,խոսվել է դասարանական կոլեկտիվում նրա ուսման առաջադիմության,հարմարման և հետագա դժվարություններից զերծ մնալու մասին:

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

- «Գիտելիքի օր»,
- Իմ տունը,մեր ընտանիքը,
- ՀՀ պետական խորհրդանիշները,
- Անկախության ուղին,
- Մեր երկրի հերոսական անցյալը,
- Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը,
- Ուսուցչի տոն,
- Թարգմանչաց տոն,
- Արցախյան հերոսամարտը ,
- Ազատամարտի հերոսներ,
- Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր,
- Մեր փոքրիկ բարեկամները,
- Հանդուրժողականություն,
- Ինչ է ընկերությունը, բարեկամությունը ,
- Ով է իմ ընկերը՝
- Գալդ բարի՛,Նո՛ր տարի,
- Իմ ակնկալիքները նոր տարում,
- Ինչ է ազնվությունը,
- Ժպիտը մարդու կյանքում,
- Մեր հզոր բանակը,
- Տեառն ընդառաջ,
- Ինչ են մեզ սովորեցնում Թումանյանի հերոսները,
- Նվիրի՛ր գիրք:Թումանյանական օրեր,
- Մայրենիի օր,
- Մարտի8,
- Հետաքրքրությունը լա՞վ հատկանիշ է, թե՞՝ վատ,
- Մարդը և օրենքը,
- Մեծերը և փոքրերը,
- Զատկի տոնի խորհուրդը,
- Դպրոցական զանգ. Ինչ խորհուրդ ունի այն,
- Առողջ ապրելակերպ,
- Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգում,
- Մայիսյանհաղթանակներ,
- Ինչպես կազմակերպել ամառային արձակուրդները:

Աշխատանքի թեման	Ուսուցչի դասավանդած առարկան
Մասնագիտական գործունեության համատեղ քննարկումներ	Մայրենի
Աշակերտների վարքի և առաջադիմության մասին տեղեկատվության փոխանակում	Մայրենի և այլ առարկաներ
Շնորհալի աշակերտների բացահայտում	Մայրենիի և մյուս բոլոր առարկաների դասաժամերին
.Աշակերտների մասնակցությունը .Հիգիենայի կանոնների պահպանում	.Մայրենիի և բոլոր առարկաների դասաժամերին . Տանը, դպրոցում և այլուր

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հովհաննես Թումանյանի հիշատակի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառում	Միջոցառում Հոգևոր դաստիարակության կարևորություն
Բնապահպանու-թյան վերաբերյալ միջոցառում	Բնապահպանական դաստիարակության կարևորություն

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Սևանա լճի ափամերձ տարածք	Բնապահպանական
Գառնի-Գեղարդ, Ե.Չարենցի կամար Երևանի Հ.Թումանյանի տուն-թանգարան	Պատմամշակութային